ԱՐՕՏ

ԱՄՍԱԳԻՐ

ԸՕՂՀԱՅԻՆ, ԲԺՇԿԱԿԱՆ, ԳՐԱԳԻՏԱԿԱՆ
ԵՒ ՓԱՂԱՔԱԿԱՆ

Ինսներորդ Տարի

ՑԵՐՈՒՍԱՂԷՄ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈԲԵԱՆՑ
1874

digitised by A.R.A.R.@



ԱՐՕՆ

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ
ԹԻՒ 12·

ԱՄՍԱԳԻՐ

ԴԵԿՏԵՄԲԵՐ 31
1874·

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԳԻՏԱԿԱՆ

ՄԱՐԳԱՐԷԱԿԱՆ ՅԱՐԱԿՑՈՒԹԻՒՆ ԸՆԴ ՄԷՋ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԱՑ (*)

Հ. Յետ լսելոյ մեր զբաղմօրինակ գուշակութիւնս Դաւթի մարգարէին վերաբերեալ առ Քրիստոս փրկիչն մեր, ոչ և որդի Նորա Սողոմոն նախագուշակեալ է ինչ զՔրիստոսէ։

Պ. Բազումք 'ի հին եւ 'ի նոր վարդապետաց Քրիստոնէից հաւատոյ կարծիս տան թէ՝ ուխտերորդ գլուխ Առակացն Սողոմոնի, յոր նկարագրէ նա զիմաստութիւնէ, այն ամենայն է նկարագիր Քրիստոսի, որ ըստ սուրբ Գրոց է իմաստութիւն Հօր, և զօրութիւն Հոգւոյն Սրբոյ։ Ըստ այսմ է տեսանել առ սրբազան Պօսուէի Եպիսկոպոսին՝ զի գրէ թէ. «Արդ՝ 'ի իմիտ առնումք զինչ է իմաստութիւն հաստատեալ ըստ Սողոմոնի յառաջ քան զյաւիտեանս 'ի ծոց Աստուծոյ, որով ուրախ լինէր նա, և հաստատէր նովաւ զամենայն գործս իւր։ Արդ՝ գիտեմք զայն՝ զոր ետես Դաւիթ ծնեալ նախ քան զարուսեակ։ Յայտնեցին մեզ մատեանք Նորոց Կտակարանաց, թէ սա է բանն՝ ներբին բարբառ Աստուծոյ. և յաւիտենից իմաստութիւն նորա, որ 'ի ծոց նորա կայ հանապազ, և որով հաստատեցան ամենայն

(*) Շարունակութիւն, տես թիւ 11։

digitised by A.R.A.R.@

նայն եղանակաւ։ Վէպք աղդաց Բ. հատոր, երես 30։

Հ. Բայց ո՞ւր նա Երդոյ Երդոյն Սողոմոնի, յոր յաճախ երդէ զիւսայէ և զհարսնէ վերաբերի առ Քրիստոս և Եկեղեցի իւր։

Պ. Սոյնանման եւ այլաբանութիւնք և նմանութիւնք նաև մարգարէն Դաւիթ երդէ ի գլուխ ԽԴ. Սաղմոսի իւրում, և ի թղթոց ինչ Առաքելոց և ի Յայտնութենէ Յովհաննու մեկնիչք Սուրբ Գրոց հաստատեն, թէ «Երդոյ Երդոյն Սողոմոնի է իսկապէս հոգեղէն նկարագրութիւնն Քրիստոսի և Եկեղեցւոյ իւրոյ»։

Տես և յԵփեսացիսն ի գլ. Ե. հմ. 23, 24, 25 և 32։ Եւ ի Յայտնութեան Յովհաննու գլ. ԻԲ. հմ. 16, 17։

Հ. Յետ որոյ և այլ ո՞ւր եղեւ նախադուշակող զգալստենէ Քրիստոսի յԱստուածաշունչ Գիրս։

Պ. Եսայեայ՝ որ կոչի Աւետարանական մարգարէ, քանզի սա նախազեկոյց զծնանիլն Յիսուսի, և զբազմաբինակ դիպուածսն Քրիստոսի, որք ամենայն յայտնապէս երեւին յԱւետարանին սուրբ։ Այսինքն են, նախ՝ յայտ առնէ զծնանիլն Յիսուսի ի կուսէ, ըստ այնմ թէ. «Վասն այսորիկ տացէ ձեզ Տէր նշան. Ահա կոյս յղացցի, և ծնցի որդի, և կոչեսցեն զանուն նորա Իմմանուէլ»։ Եսայի է. 14։ Յայտ իսկ է. զի ըստ այնմ Մարգարէութեան ծնաւ Քրիստոս ի Մարիամայ սրբոյ Կուսէն, ըստ այնմ թէ. «Եւ մինչդեռ զայս ասէր զմտաւ և ահա Հրեշտակ Տեառն երեւեցաւ նմա և ասէ. Յովսէփ, որդի Դաւթի. Մի երկնչիր առնուլ առ քեզ զՄարիամ կին քո. քանզի որ ի նմանէ ծնեալ է ի Հոգւոյն Սրբոյ է. Ծնցի որդի, և կոչեսցես զանուն նորա Յիսուս. զի նա փրկեսցէ զժողովուրդ իւր ի մեղաց։ Այլ այս ամենայն եղեւ, զի լցցի, որ ասացաւն ի ձեռն Եսայեայ մարգարէին։ Ահա կոյս յղացցի, և այլն։ Մատ. Ա. 20—23։

Երկրորդ՝ յայտ առնէ, զի եղիցի նա յարմատոյ Յեսսեայ կամ Դաւթի. Թագաւոր Իսրայէլի և հեթանոսաց, եւ թագաւորութիւն նորա կայցէ յաւիտեան, ըստ այնմ թէ. «Եւ եղիցի յաւուր յայնմիկ արմատն Յեսսեայ, և որ կանգնելոցն է իշխան հեթանոսաց, և ի նա հեթանոսք յուսացին. և եղիցի հանգիստ նորա պատուական»։ ԺԱ. 10։

Դարձեալ, «Զի մանուկ ծնաւ մեզ, որդի տուաւ մեզ, որոյ իշխանութիւն եղեւ ի վերայ ուսոց իւրոց. և անուն կոչեցաւ նմա Հրեշտակ մեծի խորհրդոյ, աքանչելի Խորհրդակից, Աստուած հզօր, իշխան, Հայր հանդերձեալոյ աշխարհին։ Եւ ես ածից զխաղաղութիւն ի վերայ իշխանաց նորա, և առաջնութիւն նմա. մեծ է իշխանութիւն նորա. և խաղաղութեան նորա չիք սահման։ Յաթոռն Դաւթի նստցի և զարքայութիւն նորա յաջողեսցէ։ Եւ զօրացուսցէ զնա իրաւամբք և արդարութեամբ, յայսմ հետէ և յաւիտեան։ Նախանձ Տեառն զօրութեանց արասցէ զայս»։ Թ. 6, 7։

Երրորդ՝ յայտ առնէ նա զմերժելն Հրէից զՔրիստոս, եւ ընդունելն հեթանոսաց ի Փրկիչ իւրեանց, ըստ այնմ թէ. «Եղիցի քեզ ի պրութիւն. և ոչ քո զքարի ոչ հարկանիցի, եւ գայթակղութիւն քեզ ոչ պատահեսցէ»։ Ը. 14։

Ըստ այսմ է, որ գրի ի Հռովմայեցիս թէ, «Որպէս գրեալ է. ահաւասիկ դնեմ ի Սիոն զքար գայթակղութեան, և զվէմ գլորման, և ամենայն որ հաւատասցէ ի նա, մի ամաչեսցէ»։ Թ. 33։

digitised by A.R.A.R.@

Եւ 'ի յառաջին Կաթողիկեայց ասէ. «Եւ զվէմ գլխման և զվէմ գայթակղութեան նոցա, որք գայթակղին և ապստամբեալքն 'ի բանէն, յոր և եդանն»։ Բ. 8։

Նաեւ յայտ առնէ նա զՏերգելն Հրէից զՔրիստոս, և զարիսն, զոր հաստատեին նմա, բան այնմ թէ. «Տէր, ո՞ հաւատաց լրոյ մերում և բազուկ Տեառն ո՞ւմ յայտնեցաւ։ Պատմեցաք առաջի նորա իբրեւ զմանուկ. իբրեւ զարմատ 'ի ծարաւոտ երկրէ, ոչ գոյր նորա տեսիլ, և ոչ փառք. տեսաք զնա, և ոչ գոյր տեսիլ, և ոչ գեղեցկութիւն, այլ տեսիլ նորա անարգ, նուազեալ քան զամենայն որդւոց մարդկան։ Ա՛յր մի 'ի հարուածս, և գիտէ համբերել ցաւոց, զի դարձուցեալ զերեսս իւր անարգեցաւ և ոչ ինչ հատարեցաւ»։ ԾԳ. 1,2,3։

Ի բազում տեղիս 'ի մարգարէութեան Եսայեայ նախագուշակէ նա լինելն Քրիստոսի Փրկիչ եւ Թագաւոր հեթանոսաց. նախ՝ 'ի գլուխ ԽԹ. հմ. 6,7. ասէ, «Եւ ասէ ցնա մեծ է քեզ այդ. կոչել զքեզ ծառայ իմ, հաստատել զազգսն Յակովբայ, և զցրուեալսն Իսրայէլի դարձուցանել։ Ահաւասիկ եդի զքեզ յուխտ ազգի և'ի լոյս հեթանոսաց՝ լինիլ փրկութիւն մինչեւ 'ի ծագս երկրի։ Այսպէս ասէ Տէր, որ փրկեացն զքեզ Աստուած Իսրայէլի. սրբեցէք զայն, որ խոտէն զանձն իւր, զազգասէրն յազգաց, 'ի ծառայից իշխանաց. Թագաւորք տեսցեն զնա՝ և յոտին կացցեն իշխանք՝ և երկիրպագցեն նմա վասն Տեառն. զի հաւատարիմ է սուրբն Իսրայէլի և որ ընտրեաց զքեզ»։

Երկրորդ՝ 'ի գլուխ ԽԳ. հմ. 1–6. ասէ, «Եւ արդ՝ այսպէս ասէ Տէր Աստուած, որ արար զքեզ, Յակովբ, և ստեղծ զքեզ, Իսրայէլ. մի երկնչիր, զի փրկեցի զքեզ, և կոչեցի զքեզ զանուն քո, թէ իմ ես։ Եւ եթէ անցանիցես ընդ ջուր, ընդ քեզ եմ. և գետք զքեզ մի ողողեսցեն. և եթէ անցանիցես ընդ հուր, մի այրեսցիս, և բոց նորա զքեզ մի կիզիցէ։ Զի ես եմ Տէր Աստուած քո սուրբն Իսրայէլի, որ փրկեմ զքեզ. արարի փոխանակ քո զԵգիպտոս և զԵւթիոպիա և զՍուհէն քեզ փոխանակեցի՝ ուստի և պատուական իսկ եղեր և առաջի իմ փառաւորեցար. և ես սիրեցի զքեզ, և տայց զմարդիկ փոխանակ քո. և զիշխանս փոխանակ գլխոյ քո։ Մի երկնչիր, զի ընդ քեզ եմ, յարեւելից ածից զզաւակ քո. և յարեւմտից ժողովեցից զքեզ։ Ասացից հիւսիսոյ ած, և հարաւոյ մի արգելուր, ածէք զորդիս իմ 'ի հեռաստանէ, և զդստերս իմ 'ի ծագաց երկրի»։

Երրորդ՝ 'ի գլուխ ԽԲ. հմ. 6,7. ասէ, «Յակովբ ծառայ իմ, օգնական եղէց նմա, Իսրայէլ ընտրեալ իմ, զոր ընկալաւ անձն իմ, ետուս զոգի իմ 'ի վերայ նորա, և իրաւունս հեթանոսաց հանցէ։ Մի աղաղակեսցէ եւ մի վանեսցի, և մի ոք լուիցէ արտաքոյ ըզբարբառս նորա։ Այլ հանցէ 'ի ճշմարտութիւն զիրաւունս, ծագեսցէ և մի խորտակեսցի, մինչեւ դիցէ յերկիր զդատաստան. և յանուն նորա հեթանոսք յուսասցին։ Այսպէս ասէ Տէր Աստուած, որ արար զերկինս և կանգնեաց զնա, և որ հաստատեաց զերկիր, և որ 'ի նմա. որ ետ շունչ մարդկան որ 'ի վերայ նորա, ոգի ամենեցուն, որ կոխեն զնա. ես Տէր Աստուած կոչեցի զքեզ արդարութեամբ, կալայ զաջոյ ձեռանէ քումմէ, և զօրացուցի զքեզ. և ետուս զքեզ յուխտ ազգին, և 'ի լոյս հեթանոսաց։ Բանալ զաչս կուրաց, հանել զկապեալս 'ի բանտէ, 'ի տանէ կապանաց, որ նըս-

digitised by A.R.A.R.@

տին 'ի խաւարի »։

Զորրորդ՝ 'ի գլուխ ԺԳ. հմ. 10. ասէ. « Տէր կամի որբել զնա 'ի վերայ անտի։ Եթէ տաջիք և վասն մեղացն, անձինք ձեր տեսցեն զզաւակ երկայնակեաց. և կամի Տէր 'ի ձեռն նորա բարեաղ 'ի ցաւոց անձին նորա »։

Հինգերորդ՝ 'ի գլուխ ԽԷ. հմ. 4, 5. ասէ. « Վասն Յակոբայ ծառայի իմոյ, և Իսրայէլի ընտրելւոյ իմոյ, ես կոչեցից քեզ զանուն քո, և ընկալայց զքեզ, և գուս զիս ոչ ծանեար։ Եթէ ես Տէր Աստուած քո, և չիք այլ ոք, և ծանիցեն յարեւելից եւ յարեւմտից թէ չիք զբ բաց յինէն »։

Վեցերորդ՝ 'ի գլուխ ԿԵ. հմ. 15—18. ասէ. « Զի թողջիք զանուն ձեր 'ի յաղուրդ ընտրելոյ իմոց, և զձեզ Տէր սատակեսցէ։ Եւ ծառայից իմոց կոչեսցիս զանուն նոր։ Որ օրհնեսցի 'ի վերայ երկրի. զի օրհնեսցեն զԱստուած ճշմարիտ. և որ երդնուցուն 'ի վերայ երկրի, երդուիցեն յԱստուած ճշմարիտ. զի մոռացին զնեղութիւնս առաջինս. և ոչ եւս անկցի 'ի սիրտ նոցա։ Զի եղիցին երկինք նոր և երկիր նոր, և ոչ եւս յիշեսցեն զառաջինսն, և ոչ եւս անկցի 'ի սիրտ նոցա։ Այլ ուրախութիւն և ցնծութիւն գտցեն 'ի նմա, զոր ես հաստատեցից »։

Զորրորդ՝ նախաձայնեալ է Մար գարէս զհանգիչն 'ի վերայ Քրիստոսի Փրկչին մերոյ Հոգի Աստուծոյ և Հոգի իմաստութեան, և այլն, ըստ այնմ թէ. « Եւ բղխեսցէ գաւազան յարմատոյն Յեսսեայ. եւ ելցէ ծաղիկ յարմատոյ անտի։ Եւ հանգիցէ 'ի վերայ նորա Հոգի Աստուծոյ, Հոգի իմաստութեան և հանճարոյ, Հոգի խորհրդոյ և զօրութեան, Հոգի գիտութեան և աստուածպաշտութեան, եւ լցցէ զնա Հոգի երկիւղի Աստուծոյ։ Ոչ 'ի կարծ դատեսցի, և ոչ ըստ խօսից յանդիմանեսցէ, այլ արասցէ իրաւունս տոչնանկին, և յանդիմանեսցէ զխոնարհս երկրի, և հարցէ զերկիր բանիւ բերանոյ իւրոյ, և հոգւով շրթանց իւրոց սատակեսցէ զամբարիշտս։ Եւ եղիցի արդարութիւն ածեալ ընդ մէջ իւր. և ճշմարտութի պատեալ զկոզս իւր »։ Եսայ. ԺԱ. 1—5։ Այս մարգարէութիւն է յայտնի նկարագրութիւն Քրիստոսի, որպէս գրի 'ի Յովհաննու 'ի գլուխ Գ. հմ. 34. թէ. « Զի զոր Աստուած առաքեաց՝ զբանսն Աստուծոյ խօսի. զի ոչ եթէ չափով տայ Աստուած զՀոգին »։ Գարձեալ թէ. « Վկայեաց Յովհաննէս և ասէ, թէ տեսանէր զՀոգին, զի իջանէր իբրեւ զաղաւնի յերկնից. և հանգչիւր 'ի վերայ նորա »։ Ի նոյն Ա. 32։ Եւ 'ի Կողոսացիսն գրի. « Յորում ամենայն գանձք իմաստութեան և գիտութեան ծածկեալ կան, այսինքն 'ի Քրիստոս »։ Բ. 3։

Հինգերորդ՝ նախագուշակէ Եսայեան նաև զպաշտօն Փրկչին աւետարանելոյ աղքատաց, քարոզելոյ գերեաց զթողութիւն, եւ մխիթարելոյ զամենայն սգաւորս, և այլն. ըստ այնմ թէ. « Հոգի Տեառն 'ի վերայ իմ, վասն որոյ և օծ իսկ զիս. աւետարանել աղքատաց առաքեաց զիս, բժշկել զբեկեալս սրտիւք. գերեաց քարոզել. զթողութիւն և կուրաց տեսանել, կոչել զամ Տեառն ընդունելի, և օր հատուցման Աստուծոյ մերոյ, մխիթարել զամենայն սգաւորս, տալ սգաւորաց Սիովնի փառս. փոխանակ մոխրոյն՝ օծութիւն ուրախութեան և սգաւորացն. հանդերձ փառաց փոխանակ ոգւոյն վհատութեան »։ ԿԱ. 1—3։

Այս ամենայն յայտնութիւնք կատարեցան 'ի Քրիստոս, ըստ այնմ թէ. « Եւ ետուն նմա գիրս զԵսայեայ մարգարէի. և յարեաւ ընթերցուլ, և իբրեւ եբաց զգիրսն, եգիտ զայն

digitised by A.R.A.R.@

տեղի , յորում գրեալն էր , « Հոգի Տեառն 'ի վերայ իմ , վասն որոյ և էօծ իսկ զիս , աւետարանել աղքատաց առաքեաց զիս , քարոզել գերեաց ըզթողութիւն , և կուրաց տեսանել , և արձակել զվիրաւորս . քարոզել զտարեկան Տեառն ընդունելի և զօր հատուցման : Եւ խփեալ զգիրն ետ ցըպաշտօնեայն և նստաւ . և ամենեցուն՝ որք 'ի ժողովրդեանն էին աչք , 'ի նա հայէին : Եւ սկսաւ ասել ցնոսա . « Այսօր լցան գիրքս այս յականջս ձեր » : Ղ.–Լ . Դ . 17–21 :

Վեցերորդ՝ նախագուշակէ սա նաև զպէսպէս հրաշագործութիւնէն Քրիստոսի , ըստ այնմ թէ . « Զօրացարուք ձեռք լքեալք և ծունկք կթուցեալք , միսիթարեցարուք կարճամիտք սրտիւք , զօրացարուք և մի երկնչիք : Ահաւասիկ Աստուած մեր հատուցանէ դատաստան , և հատուցանէ , ինքնին եկեսցէ և փրկեսցէ զմեզ : Յայնժամ աչք կուրաց բացցին և ականջք խըլեաց լուիցին : Յայնժամ վազեսցէ կաղն իբրեւ զեղջերու , եւ պարզ լիցի լեզու ծանրախօսից » : Լ.Ե . 3–6 :

Ահա այս ամենայն կատարեցան 'ի Քրիստոսէ Փրկչէն մերոյ . ըստ այնմ թէ , « Իսկ Յովհաննէս իբրեւ լուաւ 'ի բանտէն զգործսն Քրիստոսի , առաքեաց 'ի ձեռն աշակերտաց իւրոց : Եւ ասէ ցնա , Դու ես որ գալոցն ես . եթէ այլում ակնկալցուք : Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնոսա . Գընացէք և պատմեցէք Յովհաննու , զոր լուաք , և զոր տեսիք . Կոյրք տեսանեն , կաղք գնան , բորոտք սրբին , և խուլք լսեն և մեռեալք յառնեն , եւ աղքատք Աւետարանին » : Մտթ . Ժ.Ա . 2–5 :

Եօթներորդ՝ նախագուշակէ Եսայեաս առաքելն Քրիստոսի զԿարապետ և զառաջընթաց 'ի պատրաստել ըզճանապարհ գալստեան իւրոյ , ըստ այնմ թէ . « Ձայն բարբառոյ յանապատի , պատրաստ արարէք զճանապարհս Տեառն , և ուղիղ արարէք ըզշաւիղս Աստուծոյ մերոյ : Ամենայն ձորք լցցին , և ամենայն լերինք և բլուրք խոնարհեսցին , և երեւեսցին ամենայն դժուարինք 'ի դիւրինս , և ատապարանք 'ի դաշտս : Եւ երեւեսցին փառք Տեառն . եւ տեսցէ ամենայն մարմին զփրկութիւն Աստուծոյ , զի Տէր խօսեցաւ » : Ե . 3–5 :

Ի սմին նախաձայնեալ Ձայն բարբառոյ յանապատի է սուրբն Յովհաննէս Մկրտիչ . որ եղեւ Կարապետ Քրիստոսի 'ի պատրաստել զճանապարհն նորա , ըստ այնմ թէ . « Յաւուրսն յայնոսիկ գայ Յովհաննէս Մկրտիչ քարոզել յանապատին Հրէաստանի : Եւ ասել՝ Ապաշխարեցէք , զի մերձեալ է արքայութիւն երկնից : Զի սա է , վասն որոյ ասացաւ 'ի ձեռն Եսայեայ մարգարէի , որ ասէ . « Ձայն բարբառոյ յանապատի , պատրաստ արարէք զճանապարհն Տեառն , և ուղիղ արարէք զշաւիղս նորա » : Մտթ . Գ . 1–3 :

Եւ յառաջին Տիմոթէոսի գրի . « Եւ յայտնի իսկ մեծ է խորհուրդ աստուածպաշտութեան , որ երեւեցաւ մարմնով , արդարացաւ հոգւով , յայտնեցաւ Հրեշտակաց , քարոզեցաւ 'ի հեթանոսս , հաւատարիմ եղեւ աշխարհի , և վերացաւ փառաւք » : Գ . 16 :

Ութերորդ՝ նախագուշակէ Եսայեաս . նաեւ վասն չարչարանաց և մահուան Տեառն , ըստ այնմ թէ . « Նա զմեղս մեր բառնայ . և վասն մեր չարչարի , և մեք համարեցաք զնա 'ի ցաւս և 'ի հարուածս և 'ի չարչարանս իբրեւ յԱստուծոյ : Բայց նա վիրաւորեցաւ վասն մեղաց մերոց . և պատժեցաւ վասն մերոց անօրէնութեանց . խրատ խաղաղութեան մերոյ 'ի նմա .

digitised by A.R.A.R.@

և նորա վերջն բժշկեցաք։ Ամենեքեան իբրեւ ոչխարք մոլորեալք. այր ի ճանապարհի իւրում մոլորեցաւ. և Տէր մատնեաց զնա առ մեզ մեր։ Եւ նա առ վշտին ոչ բանայ զբերան իւր, իբրեւ ոչխար ի սպանդ վարեցաւ. իբրև որոջ առաջի կտրչի անմռունչ կայ այնպէս ոչ բանայ զբերան իւր։ Առ խոնարհութեան նորա դատաստան նորա բարձաւ. և զազգատոհմն նորա ո՞ պատմեսցէ. զի բառնին յերկրէ կեանք նորա. յանօրէնութենէ ժողովրդեան իմոյ ի մահ մատնեցաւ»։ ԺԳ. 4—8։

Յայտ իսկ է, զի այս ամենայն ըստ վիսայելոյ Մատթէոսի ի գլուխ ԻԶ—ԻԷ. «Կատարեցան ի Քրիստոս»։ Ըստ այսմ է եւ ի Գործս Առաքելոյ ի գլուխ Ը. հմ. 26—33։

Հ. Երեմիա եւս մարգարէացաւ վասն Քրիստոսի փրկչին մերոյ։

Պ. Այո՛, նա եւս խօսեցեալ է ինչ ինչ վասն Քրիստոսի. որպէս ի գլուխ ԻԳ. հմ. 5, 6. ասէ. «Ահա աւուրք գան, ասէ Տէր, և յարուցից Դաւթի ծագումն արդարութեան. և թագաւորեսցէ թագաւոր, և ի միտ առցէ, և արասցէ իրաւունս եւ արդարութիւն ի վերայ երկրի։ Յաւուրս նորա փրկեսցի Յուդա և Իսրայէլ բնակեսցի յուսով. և այս է անուն նորա, զոր կոչեսցէ նմա Տէր՝ Յովսեդեկ ի մարգարէս արդարութիւն մեր»։

Զսոյն բան կրկնէ նաեւ ի գլուխ ԼԳ. հմ. 14—17. այսմիկն՝ «Ահա աւուրք գան ասէ Տէր. և հաստատեցից զբանս իմ բարի, զոր խօսեցայ ի վերայ տանդ Իսրայէլի. և ի վերայ տանդ Յուդայ։ Յաւուրս յայնոսիկ և ի ժամանակին յայնմիկ ծագեցից Դաւթի ծագումն արդարութեան, որ առնիցէ իրաւունս և արդարութիւն երկրի։ Յաւուրսն յայնոսիկ փրկեսցի Յուդա. և Երուսաղէմ բնակեսցէ յուսով. և այս է անուն զոր կոչեսցէ նմա Տէր. արդարութիւն մեր»։ Են և այլ մարգարէութիւնք սորա վերաբերեալ առ Քրիստոս, որոց ոմանք զետեղեալ կան Յաւետարանին սուրբ. որպէս այս բան, որ ի գլուխ ԼԱ. հմ. 15. ասէ. «Այսպէս ասէ Տէր, ձայն ի Հռամայ լսելի եղեւ, ողբումն և լալումն եւ գուժումն. Ռաքէլ լայր զորդիս իւր. և ոչ կամէր մխիթարիլ ի վերայ որդւոց իւրոց, զի ոչ էին»։ Մատ. Բ. 18։

Հ. Զի՞նչ է եւ մարգարէութիւն Եզեկիէլի վասն Քրիստոսի փրկչին մերոյ։

Պ. Սա նկարագրէ ի դէմն Դաւթի ծառայի Աստուծոյ լինելն Քրիստոսի հովիւ և թագաւոր Իսրայէլի. ըստ այնմ թէ. «Եւ կացուցից ի վերայ նոցա հովիւ մի զծառայ իմ զԴաւիթ. և նա հովուեսցէ զնոսա, նա եղիցի նոցա հովիւ։ Եւ ես Տէր եղէց նոցա յԱստուած. և Դաւիթ ծառայ իմ իշխան ի մէջ նոցա»։ ԼԴ. 23, 24։

Եւ այլուր ասէ. «Այսպէս ասէ, Տէր Տէր, ահաւասիկ ես առնում զբոտունդ Իսրայէլի ի միջոց ազգացդ. յորս մտին ի նոսա, և ժողովեցից զբոլոսա յամենայն ազգաց, որք շուրջ զդոքօք են. եւ տարայց զդոսա յերկիրն Իսրայէլի։ Եւ տայց զդոսա յազգի մի յերկրին իսում ի լերինսն Իսրայէլի. և մի իշխան եղիցի ի վերայ ամենեցուն դոցա ի թագաւոր, և ոչ եւս եղիցին յերկուս ազգս, և ոչ եւս բաժանեսցին յերկուս թագաւորս։ Զի մի՛ եւս պղծեսցին ի կուռս իւրեանց, և մի՛ ի գարշելիս իւրեանց, եւ յամենայն ամպարշտութիւնս իւրեանց. և փրկեցից զդոսա յամենայն անօրէնութենէ դոցա, զոր մեղան ի նոսա, և սրբեցից զդոսա, և եղիցին ինձ ժողովուրդ, և ես եղէց դոցա յԱստուած։

digitised by A.R.A.R.@

Եւ ծառայ իմ Դաւիթ իշխան 'ի մէջ դոցա, և մի հովիւ եղիցի ամենեցուն դոցա. զոր ըստ հրամանաց իմոց գընասցեն և զիրաւունս իմ պահեսցեն, և արասցեն զնոսա »։ Լ.Է. 21_24։

Ըստ վկայութեան Աւետարանչաց յայտ է, զի Քրիստոս եղև միայն հովիւ և թագաւոր Իսրայէլի, ըստ այնմ թէ. « Պատասխանի ետ նմա Նաթանայէլ և ասէ. Ռաբբի դու ես որդի Աստուծոյ, դու ես թագաւոր Իսրայէլի »։ Յ«Ա. Ա. 49։

Դարձեալ, « Ես եմ հովիւ քաջ, հովիւ քաջ զանձն իւր դնէ 'ի վերայ ոչխարաց. և այն զինի »։ 'ի նոյն ԺԱ. 11_18։

Հ. Զի՞նչ էին եւ կանխաձայնութիւնք Դանիէլի մարգարէին վասն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Պ. Դանիէլ նկարագրէ զՔրիստոս որդի մարդոյ եկեալ ամպոք յերկնից. առեալ նմա իշխանութիւն, փառք և թագաւորութիւնք յաւիտեան. և թէ ամենայն ժողովուրդք և ազգք ծառայեսցեն նմա. ըստ այնմ թէ. « Տեսանէի 'ի տեսլեան գիշերոյ. և ահա ընդ ամպս երկնից իբրեւ որդի մարդոյ գայր, և հասանէր մինչեւ 'ի հին աւուրսն. և մատուցաւ առաջի նորա։ Եւ նմա տուաւ իշխանութիւն և պատիւ և արքայութիւն. եւ ամենայն ազգք և ազգինք և լեզուք նմա ծառայեսցեն. և իշխանութիւն նորա իշխանութիւն յաւիտենական, որ ոչ անցանէ, և թագաւորութիւն նորա ոչ եղծանիցի »։ Է. 13_14։

Այսմ վկայի 'ի Մատթէոսի 'ի գլ. ԻԴ. 39. եւ 'ի ԻԶ. 64. թէ Քրիստոս է որդի մարդոյ, և եկեսցէ ընդ ամպս երկնից, ըստ այնմ թէ. « Եւ ոչ գիտացին, մինչեւ եկն Ջրհեղեղն և եբարձ զամենեսին. այնպէս եղիցի և գալուստ որդւոյ մարդոյ։ Դարձեալ՝ ասէ ցնա Յիսուս. դու ասացեր, բայց ասեմ ձեզ. յայսմ հետէ տեսանիցէք զորդի մարդոյ նստեալ ընդ աջմէ զօրութեան՝ և եկեալ ընդ ամպս երկնից »։

Է և կարի նշանաւոր թիւ գալըստեան Քրիստոսի ցուցեալ Դանիէլի 'ի Գաբրիէլ հրեշտակէն. այսինքն է. « Եւ մինչդեռ խօսէի յաղօթսն, և ահա այրն Գաբրիէլ՝ զոր տեսանէի յառաջնումն տեսլեանն, թռուցեալ և մերձեցաւ առ իս իբրեւ 'ի ժամ երեկոյին պատարագին։ Եւ խելամուտ արար զիս. և խօսեցաւ ընդ իս և ասէ. Դանիէլ, այժմ եկի խելամուտ առնել զքեզ։ Ի սկզբան աղօթից քոց ել պատգամ. և ես եկի պատմել քեզ, զի այր ցանկալի ես դու. արդ ածդ զմտաւ զբանդ. և 'ի միտ առ զտեսիլդ։ Եօթանասուն եօթներորդք համառօտեցան 'ի վերայ ժողովրդեան քո և 'ի վերայ քաղաքին սրբոյ. 'ի վախճանիլ մեղայ, և 'ի կնքել անօրէնութեանց, և 'ի քաւել ամբարշտութեանց, և 'ի գալ յաւիտենական արդարութեան և 'ի կնքել տեսլեան և մարգարէի, և յօծանել սրբութիւն սրբութեանց։ Թ. 20_24։

Այս եօթանասուն շաբաթք են եօթանասուն անգամ եօթնաւորք, որք 'ի մարգարէական բարբառս են չորս հարիւր և ինսուն ամք, որ է թիւ գալստեան Քրիստոսի սկսեալ յիշատնութենէ Նեհեմայ և 'ի նորոգութենէ Երուսաղէմի եկեղեցւոյն Հրէից, որպէս և 'ի գալ Քրիստոսի այս ամենայն մարգարէութիւնք կատարեցան։

Զայս թիւ գալստեան Քրիստոսի գեղեցիկս մեկնէ սրբազան Պօսուէ եպիսկոպոսն յասելն նորա. « Եցոյց Աստուած Դանիէլի և զժամանակ գալստեան որդւոյ մարդոյ՝ զՔրիստոսի ասեմ տեղեալոյն 'ի յաւիտենից։ Եցոյց եթէ զիարդ կատարելոց է 'ի նա գոծ

digitised by A.R.A.R.@

փրկութեան աղբի մարդկան։ Իբրեւ այն ինչ պատաղեալ զգերութեամբ ժողովրդեան իւրոյ 'ի Բաբելոնն, և զեօթանասուն ամօքն յորս չափեաց Աստուած զգերութիւն նոցա. աղօթս մատուցանէր վասն ազատութեան եղբարց իւրոց. Թռեաւ մուրճն 'ի նկատել գերագոյն եւս գաղտնին. ետես այլ թիւ համարոյ ամաց. և այլ գեբահրաշ ազատութիւն։ Ընդ եօթանասուն ամացն՝ զորս ետես Երեմիա, տեսանէ զեօթանասուն երրորդսն։ Սկիզբն առնուն ամք եօթներորդացս 'ի հրամանէ անտի երկայնաձեռն Արտաշէսի վասն կառուցանելոյ զքաղաքն Երուսաղէմ, որ ամ քառասներորդ էր թագաւորութեան նորա։ Առ 'ի կատարած եօթներորդացն նշանակէ յայտնապէս «Զքաւութիւն ամբարշտութեանց, զթագաւորութիւն յաւիտենական արդարութեան, զդադարեալ տեսլեան և մարգարէութեան, եւ զօծութիւն սրբութիւն սրբութեանց»։

Զկնի վախճանն և իններեօթներորդաց վարեսցէ Քրիստոս զնշխանութիւն իւր և զառաջնորդութիւն ժողովրդեան։ Եւ յետ վախճանն և իններեօթներորդաց քանզի և մարգարէն երկրորդէ զասոյն «Բարձցի օծութիւնն» բռնամահ լինցի, և մատուցցէ զանձն յողջակէզ 'ի լրումն խորհրդոցն։ Յուշ առնէ մարգարէն խնամալ զվերջին եօթներորդս, զի 'ի նմա մեռանիցի Քրիստոս, 'ի նմա «Զօրացուսցէ զուխան և 'ի կէս նորին բարձցին սեղանք և պատարագ որպէս յայտ է մահուամբն Քրիստոսի քանզի զկնի մահու նորա ցուցանէ ըզդէպս իրացդ։ Յետ մահուան Քրիստոսի և Համբարձման նուիրեալ արհաւիրք և տագնապք յաճախեսցեն կործանեսցի քաղաքն սուրբ եւ սրբութիւնք. խաղասցէ 'ի վերայ նոցա աղգմի առաջնորդաւն հանդերձ ընչիւ զամենայն, կացցէ պղծութիւն 'ի վերայ տաճարին, և ամայութիւն յետին եւ աննորոգելի գայցէ զժողովուրդն՝ որ ապաշնորհ գտաւ առ փրկիչ իւր»։ Վէպք աղգայ. Ա. հատոր. երես 353—354։

Ո՛վ, սարսափ կալնու զիս, յորժամ զմտաւ ածեմ զհարուածսն; որ բան կանխասացութեան Քրիստոսի եկն 'ի վերայ տիրասպան աղգիս այսորիկ, ըստ այնմ թէ. «Ո՛չ մնասցէ այդր քար 'ի քարի վերայ, որ ոչ քակեսցի»։ Մատ. ԻԴ. 1, 2։ Եւ եւս թէ. «Օձք՝ ծնունդք իժից, զիարդ փախնուցուք 'ի դատաստանէ գեհենին։

Վասն այսորիկ ահաւասիկ ես առաքեմ առ ձեզ մարգարէս իմաստունս և զգպիրս, և 'ի նոցանէ սպանանեցէք և 'ի խաչ հանեցէք. և 'ի նոցանէ տանջիցէք 'ի ժողովուրդս ձեր. և հալածիցէք 'ի քաղաքէ 'ի քաղաք։ Որպէս զի եկեսցէ 'ի վերայ ձեր ամենայն արիւն արդար, հեղեալ յերկրի յարեանէն Աբելի արդարոյն՝ մինչեւ ցարիւնն Զաքարիայ որդւոյ Բարաքայ, զոր սպանէք 'ի մէջ տաճարին և սեղանոյն։ Ամէն ասեմ ձեզ, եկեսցէ այն ամենայն 'ի վերայ աղգիս այսորիկ։

Երուսաղէմ, Երուսաղէմ, որ կատարես զմարգարէս, և քարկոծ առնես զառաքեալսն առ քեզ. քանիցս անգամ կամեցայ ժողովել զմանկունս քո զոր օրինակ ժողովէ հաւ զձագս իւր ընդ թեւօք, և ոչ կամեցայք։ Ահա թողեալ լիցի ձեզ տունդ ձեր աւերակ»։ 'Ի նոյն. ԻԳ. 33—38։

Արդարեւ բան պատմութեան Յովսէփոսի և այլ ժամանակագրաց նորին այս ամենայն աւերածութիւն աղգիս կատարեցան 'ի ձեռն Տիտոսի իշխանին Հռովմայեցւոց, որ հիմնայատակ արար զԵրուսաղէմ, այրեաց զտաճարն կո-

digitised by A.R.A.R.@

զոպտեաց զարբութիւնան և զաղդն գըլ-
խոմին մնոտնեաց 'ի սոմ, 'ի սուբ և 'ի
գերութիւն։

Ահա դատաստան արդար դատա-
ւորին եաթ զարիւն արդարոյն 'ի վե-
բայ ատուածամարտ ժողովրդոյն, որք
աղաղակէին առաջի Պիղատոսի և ա-
ասէին. "Արիւն դորա 'ի վերայ մեր և
'ի վերայ որդւոց մերոյ։ Մաթ. Ի.Է. 25։

(Շարունակելի։)

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԱԶԳԻՆ ԿՐՕՆՔԸ

"Բարեպաշտութիւնը ոչ տկար, ոչ
տխուր և ոչ անձուկ բան մը ունի,
այլ սիրտը կընդարձակէ, պարզ է և
սիրուն։ Աստուծոյ թագաւորութիւնը
փոքր թիւերու խղճահար դիտողու-
թեանց մէջ չը կայանար, այլ իրա-
քանչիւրին համար իրեն յատուկ ա-
ռաքինութեանց մէջ կը կայանայ"։

Ֆենելոն նամակ առ դուքս Պուր-
գոյնի։

Աստուած իր անունը իր գոր-
ծոց վրայ դրոշմած է։ մեզ համար մի
այն փայլող լոյս մ'է։ Ամեն ուրեք այս
լոյսն զգայուն մը կը ծնուցանէ, զգա-
ցում մը պաշտօն մը, ահաւանիկ ա-
մեն նախնական կրօնից ծագումը։

Քրիստոսի կրօնքը հին օրինաց լը-
բումն և շարունակութիւնն է. մարդոց
պէտքերէն ծագում առած է, և ոչ ե-
բրայեցիութենէն, երկրիս մեղաց
մէջ սէր և ապաշաւ բերաւ։ Անդ ան-
սովոր իր մը կար որ ոչ ներկայիս և ոչ
անցեալին կը պատկանէր, դարուն ար-
տայայտութիւնը չէր, նոր սիրեղերքի
մը նոր խօսք մը էր։ ապագային ջահ մը։

Ի՞նչպէս կատարեցաւ Աւետարա-
նին պաշտօնը, թնչ փոփոխութիւններ
'ի գործ դրուեցաւ իր փարպետու-
թեանց մէջ, կրօնք անփոփոխ թէ աշ-
խարհի ձեւերուն պէս փոփոխական
պարտին ըլլալ։

Ծանր հարցմունք, որ միանգամայն
հաւատոյ խորհրդոց եւ ժողովրդեան
գոյութեան կը դպչին, ժողովրդեան
կեանքը իր կրօնքն է։

Տեսէք հին ազգերը իրենց Աս-
տուածոց պէս մի և նոյն ժամանակ մե-
ռան։

Իսիսի պաշտմանց կապուած էր Ե-
գիպտոսի բախտը, Արամազդի պաշտ-
մանց կապուած էր Յունաց փառք և
կեանք, Հռոմայեցւոց պետութիւնն
և կեանքը։

Ժողովուրդք Հրէայ Հերքիւլէսին
պէս, տկար և կոյր են, զանոնք տա-
ճարին մէջ կը շղթայեն, կը զրանան
սիւները կը խորտակեն և անոնց բե-
կորներուն տակ ճզմուած կ'իյնան։

Այսպէս ամեն ուրեք և միշտ ժո-
ղովրդեան մը տեւողութիւնը իր կրօ-
նից տեւողութեամբ կը չափի։

Նոքա որ ընդհանուր կատարածէն
ազատած են և նոքա որ կորսուած են՝
կանոնը կը հաստատեն։

Դարուց 'ի դարս բարձրացեր մին-
չեւ հնութեան անհնարին աղջամուղջ,
Գանգէսին եղերք մի եւ նոյն ժողո-
վուրդք և աստուածներք հոն պիտի
գտնես ինչ որ այսօր կը տեսնուի։ Ժո-
ղովուրդք եւ աստուածք 'ի միասին
Ձեղ եկած են։

Այս պաշտմանց բարբարոսութիւ-
նը չեմ քններ, ես կը ջանամ հաստա-
տել այն օրէնքը որ կը դատապարտէ
ազգերը իրենց աստուածոց հետ ապ-
րիլ և մեռնիլ։

Հոս ամեն բան անշարժ է, քահա-
նայն և ժողովուրդը, որ և է լոյս մը ա-

digitised by A.R.A.R.@

նոյնպէս չը հաստատի, որ և է յառաջադիմութիւն զանոնք չը բաժներ, կ'ապրին թէեւ այս օրինակ գձձութեան մէջ ժամանակ անցնել է աւելի քան ապրիլ։

Մի և նոյն իրը Հռոմի և Եղիպտոսի տեղի ունեցաւ. մեծամեծ յառաջադիմութիւնք հոն ժողովուրդը իրենց կրօնէն անջատեցին, քանի որ ժողովուրդք յառաջ երթային, կրօնը յետս կը մնար, եթէ կրօնքը կարող ըլլար անոնց շարժման հետեւիլ, զանոնք աղատած կըլլար։ Բայց հեթանոսութիւնը իր մէջ յառաջադիմութեան որ և է տարերք չունէր, չէր կարող ոչ քայլել և ոչ բարձրանալ, իր գոյութեան պայմանը անշարժութիւն էր, անշարժութիւնը միապետութեան մէջ միայն կեանք ունի։ Ազատ ժողովրդեան մէջ առանց շարժման կրօնքէն աւելի հակառակ իր մը կայ։

Երկրպագութիւն վրայ անգամ յառաջադիմութիւն մը կայ դէպ 'ի բարին, իւրաքանչիւրդար մարդկային սեռը կամքի, այս բնութեան օրէնքն է։ Քաղաքականութիւնը և աւելորդապաշտութիւնք կարող են այս ամբոխմը յամրացնել բայց ոչ կեցնել, հարկ է որ գաղափարաց թիւը աճի և լուսաւորեալ մասը զարգանայ, վասն զի հարկ է որ Աստուծոյ օրէնքը կատարի։

Այս անհուն գործը հաստատելու համար մի պանէք թէ արդի ժամանակները Հռոմերոսէն աւելի հզօր հանճար մը արտադրեցին, այլ թէ դէպ 'ի ճշմարտութիւն եւ 'ի մարդկութիւն քաղաքակրթեալ աշխարհը քայլ մը առաւ. հոն է բնութեան օրէնքը։

Այս օրէնքէն, որ ժողովրդոց պատմութեանց դրօշն է, երկու սկզբանց ծագել կը տեսնենք։ Որուն զօրութիւնը անպարտելի է։

Ամէն կրօնք որ գաղափարներ կը խղդէ և ժողովուրդը կը ջնջուէ՝ սուտ է և ասով միայն որ բնութեան օրինաց մէջ յայտնուած Աստուծոյ խորհրդոց հետ անհամաձայն է։

Ամէն կրօնք, որ մտաց զարգացման և ազգաց բարոյականութեան յարմար է, ճշմարիտ է և ասով միայն որ այս օրինաց հետ համաձայն է։

Եւ ասոնց կրնանք համարձակապէս աւետարանը աշխարհի յերկրպագութիւն ներկայացնել. կրօնքը որ իր գործն է, իր պաշտօնով, իր խորհրդով ընկերութեան ազատութեան կը պատկանի։ Իր սիրով և բարոյականով անցեալ ներկայ և ապագայ քաղաքակրթեալ ամէն ասոնց։ Ամէն խնարհ հանճարները կը բարձրացնէ և ամէնէն բարձր մտքերը կը խանարհեցնէ։

Ազգատաց և թշուառաց կրօնքն է, մարդուն համար եղած է, վասն զի ասոնց համար խակ եղած է։ Իմաստունք մտացածին աստուն երկիրներ կ'երազեն. ժողովուրդը դէպ 'ի գաղափարային կատարելութիւն կը դիմէ. զայս միշտ իրենց առջեւ պիտի գըտնեն. սա իր հետ կը կրէ մարդկութեան անագան։

Եթէ սայգ է ինչպէս որ ըսինք թէ ժողովուրդք կ'ապրին և կը մեռնին իրենց աստուածոց հետ. ուրեմն կրնանք աւետել Ֆրիսանեաց ժողովրդոց երկրպագութիւն տեւողութեան հաւասար կեանք մը։

Այսպէս կրօնից պատահած փոփոխութիւններէն չը սասկանա՛ 'ի զատ հոն երկնային ծագման ապացոյց կը գտնեմ։ Կը զարմանամ թէ սրպիսի դիւրութեամբ պատրաստ է մտաց շարժման և հանճարոց յառաջադիմութեան, բնաւ այս փոփոխմունք իր գոյութեան չեն դպչիր, այլ իր շարքն է և ոչ 'ի նա։ Տակաւ առ տակաւ կը

digitised by A.R.A.R.@

մերկանայ այն քաջէն զոր տգիտութիւնը շրջապատած է. և քանի որ քաղը կը պատռի, Աստուած տեսանելի կըլլայ. զարմանալի էր, այս յաւիտենական շարժմանց մէջ, կրօնքը մեր զօրութեան հաստատուն կը չափէ ճշմարտութիւնը և կը տեղաւորէ մեր մտաց տեսութեան կէտին մէջ։

Երբոր Յիսուս եկաւ երկրիս վրայ ամէն կրօնք և ժողովուրդք մեռած էին. իր պաշտօնը եղաւ հաստատելիք և թագաւորութիւնք վերանորոգել։ Կրոնայ ուրացուիլ թէ մեռելներ յարոյց բայց ոչ երբէք կրնայ ուրացուիլ թէ մարդկային սեռը 'ի կեանս վերածեց։ Տիեզերաց փրկչին տիրոջս ինքն իրեն տուաւ, որուն չը պիտի կրնար գլուխնուիլ անհաստատ մը, պէտք է զայն իբրեւ բարերար մը պատուել. եթէ չ'ուզուի զայն Աստուած մը կարդալ։

Եւ տեսէք միայն, ինչ սոսկալի քաոսէն մարդկային ազգը կը փրկէ։ Հռովմը Տիբերին ապաստանած է եւ կանգնեց 'ի նա տաճարները և անոր եղերանց երկրպագեց, և դիւցազնութեան տեղը Տիբերին վայրագութեան մէջ գտաւ, և Աստուծոյ մը ստորագրելիք իր ապականութեան մէջ։

Տիեզերք համայն Հռովմայ օրինակին հետեւեցաւ և այս օրինակ դրձաձութեան մէջ թաղուեցաւ։ Բնաւ չը կար ժողովրդոյ մէջ բարոյական միութիւն մը. երկիրս՝ գերեցաց վանտաստունեղած, ազգերը զինուորայ երկաթոյն ապաստանած, մարդոց իրաւունքն անծանօթ, ընկերութիւնը բռնաբարուած. առանձնաշնորհեալ ժողովուրդ մը, և բոլոր միւսները բարբարոս։

Յաղթողք կըսէին միշտ. աւաղ պարտելոց. փիլիսոփայք յաւտադրելով կըսէին. մեռիր 'ի դժբախտութեան. մարդկային արիւնը իրենց իսկ չը հաւատացած կուգայ խորանին վրայ կը հանէին և հրապարակային տեսարանաց վրայ, որպէս զի իրենց աստուծոյ պէս ժողովուրդը եւս զուարճայնեն։ Ահաւասիկ Յիսուսի Քրիստոսի եկած վայրկենին քաղաքակրթութիւնը։

Ո՜հ, զարմանք անաստման է երբ կ'ուզայ դժոխային գիշերուան քողը պատռելու եւ իր լոյսը փայլեցնելու Յունաստանի եւ Հռովմայ կրօնական կրթութեանց մէջ՝ չը կար բնաւ ազգերը զարգացնելու և վերանորոգելու ոչ գաղափար մը, ոչ ոգեւորութիւն և ոչ ըղգացում, առաքինութիւնն իսկ գահուն վրայ բաւական չէր անոնց կեանքուալ. Աստուած անշուշտ թողուց որ ջանք մը ըլլայ, անտարակոյս կը թողու տեսնալ չարութեան խորխորատը և աշխարհիս համար անօգուտ նախնի իմաստութեան վերջին շունչն ալ ցընդեցաւ Անտանիոսին հետ։

Աշխարհը ազատելու համար բաւական չէ աւերակներ վերականգնել, այլ և հարկ է ամբողջակի վերանորոգել բարոյականը, գաղափարը, կառավարութիւն և ժողովուրդք։ Յիսուս Քրիստոս այն ժամանակ եկաւ մարդկութեան համար և իրեն գերագոյն գահակալութիւնը վկայ եղաւ 'ի նախախնամութենէն մեծ. Հաստատակայութեան վերջին ժամերուն։

Տիեզերական վերածնդեան գործը լաւ ըմբռնելու համար, հարկ պիտի ըլլայ 'ի նկատի առնուլ պատմական երկու մեծ յեղանակներ և նկարագրել ժողովուրդ։ — Թագաւոր իր փառաց և ազատութեան մէջ։ Աւերտարանի ժողովուրդը իր քաղաքակրթութեան մէջ։

Բայց այս պատկերները այնչափ անգամ կրկնուած են որ ամէն նոր կրկնութիւն տաղտկալից կըլլայ, զանոնք ծանօթ գործերը ենթադրելով.

digitised by A.R.A.R.@

ուսկէց կը հետեւցնեմ հին և արդի պատմութիւնները իրենց յատկանիշ եղող բարոյական գաղափարովը։

Անցեալին բարոյական գաղափարը հայրենեաց սէրն է, նախնի հատարակապետութեան բոլոր հրաշալիքը հատատ բայց անձուկ հիման մը վրայ դադար կ'առնու։ Ներկային բարոյական գաղափարը մարդկութեան սէրն է։ Տիեզերական մարդասիրութիւնը որ Աւետարանին ոգին է համօրէն մարդկութիւն կ'ընդգրկէ։

Ցաւալի է դիտել որ նախնի ժամանակաց մէջ չը գտնուիր միակ օրէնսդիր մը միակ իմաստուն մը որ իր հայրենեաց օրէնքը սահմանած ժամանակ, նկատուած ունենայ այլոց ժողովրդոց բարեբաստութիւնը։

Յիսուս Քրիստոս այս նոր առաքինութիւնը ազգաց տուաւ, համօրէն աշխարհի անծանօթ զգացումը մի է, որմէ աշխարհս կեանքը բղխել սաւաւ։

Աստուծոյ ժողովրդեան, ընտրեալ հօտի առանձնաշնորհեալ ցեղի անձուկ գաղափարով տոգորուած և մոլեռանդութեան ու տեղութեան վարդապետութեան մէջ կրթուած տղայ մը կեղ չէ տնվեհեր մարդկային զարմին սէրը քարոզելու։

Արարիչը բոլոր մարդոց հայրը՝ Աստուածաշնչի բարկացող և զԱբրահամ առանձնացնող Աստուծոյն տեղ կը ցրցնէ։

Մովսէս ժողովրդեան աղատարարն էր միայն, իսկ Յիսուսը տիեզերաց փրկիչը, արդիսի մարդասիրութիւն և ինչպիսի գթութիւն. ինչպէս իր ցեղի յատուկ զգեստը կը մերկանայ, աղգային հպարտութիւնը կը ցնցէ բարեութեան և անապաշտութեան շղթաները կը խորտակէ, Հրէայ է ինքն և նղովք չը կարդար. նա չ'աղաղակէր ոչ վրէժխնդրութիւն և ոչ կատորում. նա Հրէայները աղատելու վրայ չը խօսիր, այլ աշխարհը։ Իրեն թագաւորութիւնը խաղաղութիւն և անկիրջարութիւնն է, նա չէ եկած ոչ երկաթով աշխարհակալելու եւ ոչ կայծակամբ հարկանելու, այլ խօսքով ամոքելու և սիրով քաղաքակրթելու։ Այսպէս մարդկային ազգը իր միութեան զգացումը Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի կը պարտի։

Քանի՞ ճշմարտութիւնք անով մինչ այն կ'ապրէին և պիտի կրնային անոր հետ շիջանիլ և անհետանալ, վայրկեան մը եղաւ ուր երկրագնդին ամբողջ ապագան մէկ հոգւոյ մէջ ամփոփուած կը գտնուէր։

Մարդկային սեռը կանգ առջեւ կը խոնարհէր, և ինքն միայն արարիչ Աստուած կը յայտնէ, անծանօթ աստուածը՝ աստուած մը։ Բոլոր ժողովրդոց հաւանութիւնը գերութիւնը նուիրագործած էր, ինքն միայն ըսաւ ժողովրդոց թէ, «Ամեն մարդիկ ազատ են, վասն զի ամեն մարդիկ եղբայր են»։

Իմաստութիւնք բոլոր բարոյական ճշմարտութիւնները թագուցած էին, և մարդոց գործերը քաղաքական օրինաց միայն կը կառավարէին։ Հռովմայեցւոյ և Սպարտացւոյ առաքինութիւնները իրենց սահմանադրութեան մէջ գրուած էին և ոչ կրօնից մէջ։

Յիսուս միայն՝ երկրիս վրայ լսաւ կը հասկնայ թէ օրէնսդրի մը այն գործը անկատար է, մեր հոգին անձուկ սահմանի մէջ կը սեղմէ և իր առաքինութեան թռիչները կը ջախջախէ։ Միայն ինքը գիտէ որ մարդս հոգով միայն չ'ապրիր, այլ ճշմարտութեամբ. մինչեւ յինքն անծանօթ ճշմարտութիւնները բոլորովին ժողովրդական կրթութեան մը դիւրին և շնորհալի ձեւով աշխարհի կը ներկայացնէ։

digitised by A.R.A.R.@

Փիլիսոփայից վերացական իմաստութեան տեղ մարդոց համար յարմարցուած պարզ ճիշտ և գերագոյն իմաստութիւն մը ;տուաւ՞ որ ականջին պէս սրտին խակ ազդէ առանց աշխատութեան և յոգնութեան իրը զգացմամբ մը յիշողութեանը որ հոգւոյն մէջ կը հանգչի և զոր պէտք է տանել յերկինս։

Մինչեւ յինքն ամենէն բարձր առաքինութիւնն էր կեանք ընդունած երկրին փոքրիկ անկեան համար մեռնելը. հայրենեաց սահմանը մարդկութեան սահմանը կը գծէր։ Արդ փրկիչը մեզ կ'ըսէ "Մեր հայրենիքը երկրագունդն է. մեր ընտանիքը մարդկութիւն և մեր հայրը Աստուած է"։ Զարմէ այս խօսքերուն մեծութիւնը և տես թէ որպիսի սկզբունք մեզ կ'ուսուցանեն ինչ բարոյական կը տարածեն և ինչ բախտ մեզ կը խոստանան. հիները կըսէին. "Հարկ է սիրել իրմէ աւելի ընտանիքը և անկէ աւելի հայրենիք" ասոնք մասնական քաղաքակրթութիւն, մշտնջենաւոր պատերազմ. Յիսուս Քրիստոս կը յաւելու "իր հայրենիքէն աւելի մարդկային ազգը. ասոնք տիեզերական՝ քաղաքակրթութիւն, անդադրելի բարոյական, և ընդհանուր խաղաղութիւն։

Որդիական սէր առ Աստուած, եղբայրական սէր առ մարդիկ, երկնային և երկրային օրէնք. կատարելութեան բարձրակէտն ուր հոգին միայն կարող է ճախրել։ Ուշի ուշով դիտեցէք թէ Յիսուսի Քրիստոսի կրօնքը բնութեան օրէնքէն ծագեցաւ և պատուիրանները մարդկային սրտին մէջէն առնուեցան։ Իրմէ առաջ՝ այս մտածութեան վրայ յենլով կըսեմ. քաղաքական կրթութիւնք քաղաքացւոյ մը պարտիք միայն կ'որոշէին, մարդկային բարոյականը նիւթական շահերով միայն կրօնի պաշտամանց կը հպէր։ չը կար և ոչ ինչ որ զմարդը աստուածոյ հետ միացնէր։

Հայրենեաց համար առաքինի էին։ Աւետարանը զմեզ երկնից և մարդկութեան համար առաքինի ըրաւ։ Այսպէս Յիսուս 'ի մի ակնարկ անկը բան փիլիսոփայից բարոյականին անբարոյական հեթանոսաց կրօնից աւելորդապաշտութիւնն դարմանեց հաստատելով բարոյականը, կրօնքը և Աստուծոյ և մարդկութեան սէրը։

Այսպէս խոպան դատապարտեցան կրօնական ամէն բռնութիւնք։

Աստուած և մարդը սիրելը զանոնք Աստուծոյ հաճոյ ըլլալու համար խրդելչէ։ Հայրը իւր որդւոյ արիւնը չը խնդրէր, և զաւակունք Թող իրենց եղբարց արիւնը չը հեղուն. սէրը սիրած առարկային երջանկութիւնը կ'ուզէ, և ով որ բարկութեան և առելութեան ոճիրները անոր վրայ կը դնէ՝ բնութեան օրէնքը կը ջախջախէ. եւ Աստուծոյ մտածութեան տեղ մարդոց խորհուրդը կը զետեղէ։

Արդ կշռենք այս վարդապետութիւնները սկզբունք մը հանենք և ըսենք. կրօնքը այն ժողովրդեան համար է որ հոգին 'ի մարմնի է։

Արդ թէ ձեւով բանաստեղծական և թէ էութեամբ մարդկային նախնեաց կրօնքը յառաջադիմութեան որ և է տարրը չէր պարունակէր. և անշարժ կրօնք մը 'ի յառաջադիմութիւն եղող ժողովրդեան քով զետեղել անկարելի ըլլալով կը հետեւցնենք թէ մտաց ամէն բարգաւաճում ընդարմացած էր առ նախնիս մահուան ծանրութեան տակ։

Այս կրնայ հասարակապետութեան (1) անցքին վրայ լոյս մը սփռել. ուր Պղատոն իրը սկզբունք կը դնէ թէ վը-

(1) Պղատոն հասարակապետութիւն. Գիրք Գ.

digitised by A.R.A.R.@

տանգաւոր է ճշմարտութիւնը ժողովրդեան յայտնել. այլ պէտք է իր կը բնական հաւատալեաց խնայել, նը մանապէս կան պարագաներ որ ռամկաց նախապաշարմունք պահել պարտք մի է։ Այսպէս առ նախին ամենէն բարձր փիլիսոփայութիւն սխալանաց թոյլտուութիւն կընէր, մանաւանդ թէ կ'ուսուցանէր։

Հաբրահամ-Ալեքսանդրիան այս մոռնմունքը նախնի ժողովրդեան մահուան վճիռն էր, Պղատոն լաւ ըմբռնած էր թէ ցունասանի կրթութիւն և կրօնքը ստութեան վրայ հիմնուած էր, և հարկ էր ճշմարտութեան առաջին յայտնութեան դէմ փչիլ և անհեռիլ։ Ընդհակառակն Յիսուսի Քրիստոսի վարդապետութիւնը իր էութեան մէջ կատարեալ է, ստութիւնը 'ի վեր կը հանէ. նախապաշարմունքը կը փարատէ, և մեր կուրութեամբ շրջապատեալ աւելորդապաշտութիւնքը կը հարուածէ զմեզ մեր նախնական մաքրութեան և ամբծութեան կը վերադարձնէ, երկրային ցնցոտիներէն ըզմեզ կը մերկացնէ միով բանիւ բոլոր ժողովրդեան վրայ կեանք և լոյս կը սրփռէ ըստ երկնային բանին Յիսուսի Քրիստոսի «ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ ԶՁԵԶ ՊԻՏԻ ԱԶԱՏԷ»։

ԷՄՄԷ ՄԱՐԻԷՆ Թարգ.

Զաքար Մ. Համբարձումեան,

Ո-Խրատոր։ Յերուսաղէմ։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

(Շարունակութիւն և վերջ, տես թիւ 11.)

Այս կուռքերու ձեւերը անթիւ են, ոմանք արձանի ձեւ ունին, դլուխ գազանի, ականջ մարդոյ, բերան թռչնոյ, ձեռք մարդոյ, աչք եզան, մարմին մարդոյ, ոտքեր ունասնոյ, կամ մարդոյ, պոչ գետի կը նմանի, ուրիկ գետաբէն ջուրերը կը վազեն։

Ոմանց գլուխ օրիորդի, դէմք թռչնոյ, երկոյն կուռց ունին և բերնէն օձ կ'ելլէ, և շատ մը աչքեր ունին, շատ ձեռք և շատ ականջք, այսպէս ալ շատ մը ոտքեր ունին։

Ոմանք կատարեալ կերպով օրիորդի մը պատկեր կը կրեն։

Ոմանք խառն առն և կնոջ պատկեր, ոմանց գլուխ եզան, դէմք մարդոյ, մարմին գազանի, իսկ երեսը խաչաձեւ։ Վերջապէս անթիւ են կուռքերու պատկերները և տեսակները և ըստ հաճոյս կը կերտեն և կը պաշտեն։

Պրմատանու մէջ փոքր կղզի մը կայ, ուր շատ մը բրգունք եւ կուռ տուններ կան։ Մանաւանդ Պկան անուանուած տեղւոյն կռատունը ոլորուն մէջ կը բնակէին քուրմ պատգամաւորները։

Կը պատմուի ասոնց վրայոք թէ առաջին ժամանակները երբ Հնդկաց թագաւորները 'ի գահ կը բարձրանային, պատգամ կը հարցուներին թէ՝ «Եթէ մեր թագաւորանիստ քաղաքի մէջ բնակիմք, մեզ լաւ կը լինի թէ վատ» ասոր 'ի պատասխանի պատգամ կ'ընդունէին մեծ մասամբ՝ թէ վատ կը լինի։ Այս պատգամէն վախնալով շատ թագաւորներ քաղաքները կը ձգէին ժողովուրդն առնելով կ'ելլ-

digitised by A.R.A.R.@

թային ուրիշ տեղ, նորէն քաղաք կը շինեին կը բնակէին, իրենց նախնի քաղաքը աւերակաց կոյտ կը դառնար։

Ա. յժմեան Հնդիկ կռապաշտները իրենց մեհեաններու մէջ փողով եւ թմբկով և ուրիշ տեսակ տեսակ քնարներով կը կատարեն իրենց պաշտամունքները։

Երգերու եղանակները մեծ մասամբ մի եղանակ է, երեսի վրայ կուռքի առջեւը ինկած երկրպագութիւն կ'ընեն և երկար ժամանակ գիտնամած երեսի վրայ կը մնան։

Խիստ ջերմեռանդ են և անմունջ երկու ձեռք իրարու մոծուցմամբ, հայցուածներ և խնդրուածներ կ'ընեն, և իւրաքանչիւր աւուր համար զատ զատ ներկեր ունին, որով կը ներկուին, ոմանք 'ի ճակատ, ոմանք 'ի կուրծք, ոմանք ականջները, ոմանք բազուկները կը գծեն, ոմանք ոտքերը, ոմանք զգայարանքները, և ոմանք անբաղջ մարմինը։

Ա. յայլոսի արարողութեանց մէջ, սոցա սաղմոսները բազմատեսակ են, ոմանք իրենց պարանոցը մաներ համրիչներ կը կրեն։ Եւ այն համրիչները միայն Քրմապետները կրնան շնորհել, զորս շատ զգուշութեամբ եւ պատուով կը պահեն։

Ոմանք իրենց գլուխները այլ եւ այլ ձեւով գերծել կուտան և տեղ տեղ ծամ ձգելով, ոմանք միտակ գագաթն կ'ածիլեն, ոմանք միտակ գագաթն չեն ածիլեր։ Ոմանք գագաթն միւսեւ ցձակատն, և երկու ականջներու վրայ կամարանման մազ կը թողուն։

Ա. յս ժողովուրդը այս սովորութիւնները շատ խստիւ կը պահէ։

Սինէացոց այսինքն Զինացոց կրօնք
Եւ նոցա կռապաշտութիւնը։

Զինացիք երկրպագութիւն կ'ընեն կուռց, պատկերաց, իրենց նախնի կայսերաց, և ուրիշ շատ ընչին իրաց, և այլ և այլ անուններ կուտան իրենց աստուածներուն։ Ինչպէս յարեւելից յարեւմտից հիւսիս և հարաւոյ աստուածները. միջերկրային լեռներու աստուածները, հնացած աստուածները, և այս աստուածներուն գալստեան և համբարձման օրերը նուէրներ կը մատուցանեն։

Զինացիք միշտ և ուրիշ կենդանիներ ալ կը պաշտեն։

Ա. յսպէս ալ ճոխութեան, գինւոյ, գիտութեան, երջանկութեան, երկրի, ցորենոյ, մանկանց ծաղկի, որոտման, մարդոյ, հրոյ, հարաւային և հիւսիսային ծովու, հարաւային բեւեռի, հիւանեերու և այլն աստուածներ ունին։ Նաև երկնից թագուհի աստուած ունին։ Ամէնք ամենքը զարդարելով կռատանց մէջ դրած կը պաշտեն եւ մեծ հանդէսներով ոճն կը կատարեն, նոցա անուան յիշատակի համար։

Զինացիք սգեպաշտութիւն եւս ունին, սրքա երբեմն կը կասկածեն թէ իրենց տան մէջ սատանայ կայ, ուստի վառօդով պայթուցիկներ կը նետեն սատանայներ հալածելու համար։

Զինացիք կը հաւատան թէ երկրի տակը եօթանասուն երկու գաւառներ կայ, որոց առաջինը քաւարան կը կոչուի. ուր թեթեւ յանցանք ունեցողները կը սրբուին, իսկ 'ի ստորին գաւառները գնացողներուն ամենեին փրկութիւն չի կայ, և անոնց պատիժը յաւիտենական հուրն է։

Նաև կը հաւատան թէ յերկինս երեսուն և վեց գաւառ կայ, որոց մէկուն մէջ կը բնակին բարեգործներու հոգիները յաւիտենականապէս երջանիկ։

Զինացւոց Քուրմերը լայն և երկայն

digitised by A.R.A.R.@

զգեստներ կը զգենուն, գլուխներն կ'ածիլեն, և չեն ամուսնանար։

Սոցա կերակուրները ընդեղէն է, և բանջարեղէն, ոգելի ըմպելիները սոցա համար խստաս արգիլուած է։

Սոցա Քուրմերը մեհեաներ մէջ դիցապաշտութեան ժամանակ երկայն վերարկու մը կը հագնին, զանգերով և ծնծղայներով, երբեմն եղանակաւոր ձայնիւ և երբեմն թիւ առանց եղանակի կը երգեն։

Խնկերու ամանները սեղաններու առջեւը դրուած է շարունակ ծխանելիներ կը ծխեն։

Զինուորք փոքր հատակի մէջ կ'ամուսնանան և բաղմակին են։

Սոցա ննջեցելոց յուղարկաւորութեան հանդէսը ճիշդ Պրմաց հանդէսին կը նմանի։

Ուանգնոյ կոտորածն և նորա յետքերը։

Այն կռատան անուն է երիտ միայեալ, որ շատ ընդարձակ է բլրակի մը վրայ։ Այն կռատան առաստաղն ոսկեպատեալ փայտեայ ձուկ մը կախուած է։ Քուրմերու բնակութիւնը շատ գեղեցիկ շինուած է և զանազան զարդերով զարդարուած, ըստանելի են քանդակները, մանաւանդ թռչնոց և կենդանեաց պատկերները։ Կռատան մէջ վիշապագլուխ կենդանի մը նկարած են իբրև պահապան կռատան։ Այսպէս ալ յաջմէ և յահեկէ մէկ մէկ հրեշտակներ, որոց ձեռք մէկ մէկ փող։ Եւ ուրիշ մարդաձեւ կենդանիներ, ծաղիկներ, եւ վիշապները նկարագրուած են։ Մոմավաճառք զանազան ծխանելիներ եւ ոսկեջոջ տախտակներ կը վաճառեն, զոր ժողովուրդ գնելով կռատերուն կը նուիրեն։

Նուիրատուութեան ժամանակն երբ կը հասնի, նուիրեալ բնկուհի պառաւ մը երկաթեայ կռան ի ձեռին, ձողի մը կախուած տախտակին զարնելով՝ զժողովուրդն յուխտ և երկրպագութիւն կը հրաւիրէ, որք իրենց նուէրները տանելով իրենց պաշտամունքները կը կատարեն։

Շատ մը բնկուհիներ կան սոյն կռատան մէջ, որք տաճարը եւ ուրիշ սենեակները մաքրելու աւելու պաշտօնը ունին, անթիւ կուռքեր կան կռատան մէջ. իսկ մեծ կուռքը ուրիշ զատ սենեակի մը մէջ դրուած է, որուն բոլորտիք շրջապատած են այլ և այլ հատակաւ սպիտակազգեստ մարդիկ, որք կը ծառայեն կռոյն։

Սոյն մարդկանց մեծերը նստած, իսկ փոքրերը ոտքի վրայ կեցած են, և մեծ ատուռոյն առջեւը շարունակ խունկ կը ծխեն, եւ անուշահոտ ծաղիկներ կը նուիրեն։

Այս կռատան մէջ երկու մեծ զարմանալի զանգերը կան, որոց կենսն աւելի ոսկի է, 32 թիզ բարձրութիւն ունի, շրթանց շրջապատը 64 թիզ է, թանձրութիւն վեց թիզ։ Աւանդութեամբ կը պատմուի թէ, երբ թագաւորի հրամանաւ այս զանգերը կը ձուլէին, ժողովուրդն եւս մասնակցելու համար իրենց ոսկի եւ արծաթ զարդերը կամովին տարած ձուլարանի մէջ ձգած են։ Այս զանգերն ալ կը յարգեն, և կ'աղօթեն առջեւը։

Թէ այր և թէ կին սովորութիւն ունին երբ զանգին կը մօտենան երկուքար առնելով գետնէն, մինն դարձեալ գետին կը նետեն, իսկ միւսը զանգին կը զարնեն, և այս արարողութիւնը երեք անգամ կրկնելէն վերջը կը մօտենան իրենց պաշտօնը կը մատուցանեն։

digitised by A.R.A.R.@

Այս ժողովուրդը իրենց մեռելները չեն այրեր, այլ կը թաղեն։

Կռապաշտները սովորութիւն ունին իրենց կուռքերը հանդէսով շքեղացուցանելով տօն կատարել, եւ այս տօնին կ'ըսուի Պ-ր-ա-գի Բ-ռ-ճ-ա։

Հանդէսի չի սկսած բոլոր փողոցները մաքրել կուտան և ջուր կը սրսկեն փոշիները նստեցուցնելու համար, որպէս զի իրենց գեղեցիկ զարդերը չը փոշոտին, և հանդէսի գեղեցկութիւնն չը նսեմանայ։

Հանդէսը կը սկսի հետեւեալ եղանակաւ։ Նախ չորս հարիւրի չափ մարդիկ իբրեւ Թիկնապահ Անդրիացւոց զօրաց զգեստով և երկար գլխարկներով կը պատրաստուին, որոց ճակատները մէկ մէկ ոսկեզօծ ծաղիկներ կանանչ ու ծիրանագոյն փեղջրներով զարդարուած, եւ ոմանք կարմիր ու երկայն զգեստներ հագած, որոց թիւն դարձեալ չորս հարիւրի կը հասնի, սոքա ալ դրօշակակիրներն են։

Զատ խումբ մը ևս երաժշտականներ որոց գլուխները դարձեալ երկայն գլխարկ եւ փեղջրներ որք տեղական սովորութեան համեմատ թրմբուկներով երգելով եւ կռոց նուիրեալները հետերնին կուգան։

Հանդիսատես ժողովուրդը խուռն բազմութեամբ յաջմէ և յահեկէ պատկառանօք կանգնած կը դիտեն։ Հանդէսին առաջէն կ'երթան կեղծ զօրականաց խումբ մը արծաթեայ տէկ 'ի ձեռին, եւ ոոցա մէջ տեղէն ուրիշ բազմանուէր ժողովուրդը, որք ոսկեթելիւ հիւսուած արկանելիներով ձիաւորներու եւ տեւէն գոյն զգոյն դրօշակներով կուգան։

Սոցա ետեւէն հրացանակիր կեղծ զինուորները, որոց հրացանները բեհեղեայ կարմրագոյն թաւշեայ ծածկոյներով զարդարուած են։ Ասոնց ետեւէն աւելի գեղեցիկ արկանելի առնող աղնուական փոքր երախաներու խումբը կուգայ որք մեծահարուստ զարդերով և պատուական քարերով զարդարուած են, պարանոցներէն ոսկի շղթաներ մարգարտեայ հիւսուածներ, և ականակուռ զարդեր կախած, 'ի ձի նստած սպասաւորներն ալ յաջմէ և յահեկէ պարառեալ կ'ընթանան։

Ոմանք ալ զարդարուն փոքր կառք նստած մարդիկ կը քաշեն և առաջնեւէն արծաթեայ գաւազանակիր պահանորդներ կ'երթան։

Սոցա ետեւէն կուգայ խոնարհ կառքի մը վրայ նստած արծաթապատ կամոդիկէիւ շինուած մը, որուն մէջ նստած են կռատան նուիրուած փողերու և թմբուկներու հնչողները։

Ասոնց ետեւէն երեք աստիճան ունեցող քառակուսի արծաթեայ սեղան մը չորս սեան վրայ հաստատուած։ Այս սեղանը Բագնին նուիրուած է, իբրեւ Ճրագի սեղան։

Այս սեղանի ետեւէն կուգան կառքի մէջ նստած աղնուականները։ Սոցա ետեւէն երկու աստիճան ունեցող արծաթեայ կամոդիկէիւ Բագնի ծաղկի ամանները, չորս լծակներով մարդիկ կը կրեն։

Սոցա ետեւէն դարձեալ դրօշակները և հասարակ թմբուկները և ժողովուրդները, որք սիսեռէն աւելի մեծութիւն ունեցող մարգարիտներ և զմրուխտներ կը կախեն վիզերնին։

Ասոնց ետեւէն կ'երթան արծաթեայ գաւազանակիրները, որոց մէջ դարձեալ խոնարհ կառքի մը վրայ նստած ծառաձեւ տունկ մը արծաթեայ ափսիի մէջ, որուն տերեւներէն բոժոժներ կախուած, իբրեւ ձայնատու զոր մարդիկ լծակով կը տանին։

Որոց ետեւէն կրկին չորս հարիւրէն աւելի գոյնզգոյն բեհեղեայ դրօշակնե-

digitised by A.R.A.R.@

ը Հանդիսի երկու կողմէն կ'երթան։ Սոցա ետեւէն փոքր մանուկներ, զորս իրենց ծնողները նուիրած են կուռքին, այն ազայոյ զարդերուն գնահատութիւնն շատ դժուար է, զի շատ հազուագետ զարդեր ունին, թէ նուիրեալները թէ հանդէսին ծառայողները և թէ հանդիսատես ժողովուրդը։

Սոցա ետեւէն դարձեալ գմբէթաձեւ կամթողիկէ մը ոսկով պատած, և գոյնզգոյն ծաղիկներով զարդարած են, որ լծակով կը տանին մարդիկ։ Որոց ետեւէն քառակուսի ամթոռ մը, որուն առաջէն երաժշտական խումբ մը, ոռոյա ետեւէն պարզ զգեստ առնող հարուստները, և ասոնց ետեւէն քնարահարները։ Յետոյ կուգայ որովայնախոս մը, որ գաւազանի մը միջոցաւ քնարները երգելու հրաման կուտայ։

Զկնի սորա փող 'ի ձեռին և պարկ վզէն կախուած քուրմը կուգայ, դրամ հաւաքելով։

Սորա ետեւէն երկու լծակաց վրայ արծաթով պատուած քառակուսի գմբէթաձեւ պատգարակ մը որուն չորս կողմէն երեքական սիւներու վրայ հաստատուած կամթողիկէներ կան, մարդու մը հասակէն աւելի բարձր, մէջ տեղէն եռակուսի ժողովեալ սրածայր լեռնակի պէս բարձրացած է, ոռուն վարէն մինչեւ ցվերին կատարը ատիճաններ հաստատուած են։

Այն բարձրութեան վրայ բազմած է Հնդիկ կռապաշտներու ատուածը զարդարած Հնդկաց հարստութեամբ ոսկով, արծաթով, եւ անգին քարերով, մանաւանդ այն ականակուռ ճաճանչը, որ նորա գլխոյն վրայ կը ծածանիր։

Այս կուռքը ոչ մարդու կը նմանի և ոչ անասնոյ. այն քուրմը որ դրամ կը հաւաքէ պարկ վզէն երբ դրամը կ'առնու, ուրիշ մեծ քուրմին ձեռքը շփելով ազդ կ'առնէ, նա ալ Բագնի ատիճանը պարգեւ տուողին համբուրել կուտայ։

Եւ նա ատիճանը համբուրելէն յետոյ գլուխն բանալով մեծ քուրմի ձեռքն եւս կը համբուրէ։

Այն մեծ ատուածոյն պաշտօնեայ քուրմերը սոցա բնակած տեղւոյն շրջապատը պաշարած հսկելով կ'երթան, որպէս զի օտարական մը չը մերձենայ իրենց ատուածոյն։ Նա և երկու կողմէն ճանճահալածներ կան, և անուշահոտ խունկեր ծխողներ։

Այս եղանակաւ Հնդիկ կռապաշտները իրենց մեծ ատուածոյն տօն կատարելով մի քանի անգամ կը շրջեցուցանեն քաղաքի և հրապարակներու մէջ թէ և հանդէսները իրարմէ տարբերութիւն ունին՝ քիչ շատ։ Այն հանդէսներուն օրինաւորապէս կը հսկեն Անգղիացի զօրականները անտեղութիւն եւ անկարգութիւն չի պատահելու համար։

digitised by A.R.A.R.@

Ի ԾՆՈՒՆԴՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Ով, բեթղեհեմ, խայտա՛ քաղաք երկնասարաս,
Դովաբանեալըդ 'ի քառանկիւն տիեզերաց.
Աշխարհատեղծ պատարաստ գրտաբ թագաւորին,
Ասպնջական, որովհետև երկինք ոչ բաւէին։
Պարագրեալս համայն լեցիս դու քաղաքաց,
Քանզի 'ի քեզ, ելջին յերկնից բանակ զօրաց.
Յորոց ուսան եկեղեցիք ըղդալոցիկ,
Նովաւ օրհնել ըղմիութիւն երից անձանց։
Հա՛ստա այսօր մեք որդիքս նոր Միսնի,
Երգեմք զերգս ըստ անմարմնոց դասուց երկնի.
Որք մեծաձայն յերկնից 'ի վայր աւետէին,
Ըղծագմանէ խաղաղութեան 'ի յաշխարհի։
Ելէ՛ք բանտեալք 'ի մթդասատ խորշ լեմպոսին,
Տանջեալք յաւէտ 'ի մէջ ժանեաց երկնասահին.
Ելէ՛ք ահա Փրկիչ ծընաւ՝ քաղաք Դաւթի,
Ելէ՛ք 'ի ձէնջ մերկացարուք, քօղ արխարալի։
Այլ՛ արմատ հողանիութեաց սեռից մարդկան,
Որ կաս գլուխալ ընդ ոսոխին իշխանութեամբ.
Այլ՛ այսօր փութա՛ Սաղիմ 'ի սուրբ քաղաք,
Տես բազմավաշտ զակիշ զօրաց արքայական։
Որոց աստղ կարապետեալ արփիական,
Ի Սաղիմայն ժամանեցոյց 'ի սուրբ սահման.
Այնու գլուխն գունդք արքայից զտարփալոյն,
Ըզվասն մեր մանկացելոյն սուրբ օթեվան։
Ընծայեցին ձօնս ոսկիւ անկարօտին,
Յորմէ տացին ձիրք զանազան էից զարմին.
Տեսեալ ըզնա խանձարրատպատ 'ի գիրկ Կուսին,
Զ.զրով յաւէտ երկնաբընակք պար առնէին։
Այսօր հոսանք Յորդանանու վըճիտ ջրոց,
Ծոցան առնուն ընդ վէտ ընդ վէտ եւ հոծ ընդ հոծ.
Մինչ երկնաձեմ ոտից գլուխն նոր աւազան,
Յորում նախնւոյն ըզձեռագիր կիրեաց 'ի բոց։

Հ. Կ. Բազրատունեան։

digitised by A.R.A.R.@

ՊԱՏԱՍԽԱՆ

Ա՛ն Կ. Մ. — Ներեցէք որ Խմբագրութիւնս կարող չէ հրատարակել ձեր յօդուածն, որով քանի մի պաշտօնական անձանց կեանքն ու արարքը կը նկարագրէք։ Շատ հաւանական է, որ ձեր գրածներն ճիշդ են և ստոյգ աղբիւրներէ քաղուած, բայց ամենէն առաջ մոռացելու ենք թէ ինչ օգուտ կարող ենք քաղել այդպիսի մի հրատարակութենէ։ Թերեւս պիտի ասէք, թէ ճշմարտութիւն է և պէտք չէ ծածկել։ Կընդունիմք, որ ճշմարտութիւնն խօսելու է և խօսելով ստութիւնը և չարութիւնը խայտառակելու։ Բայց գիտէք արդեօք, որ մեր ժողովրդի տգիտութեան պատճառաւ, այն անձինքն որոց կեանքը մերկացուցած էք դուք, ժողովրդեան կամ լաւ եւս ասել մարդելոյներու առջեւ մեծ վարկ ու համբաւ ունին։ Խմբագրութիւնս արդէն ձեր յօդուածը կարդացած էր եւ բոլոր իրաղութեանց տեղեակ, բայց մի և նոյն ժամանակ ահագին գովեստներ տեսաւ Պօլսոյ լրագրաց ոմանց մէջ, թերեւս դուք այն սուտ գովեստներէն ստիպեալ գրած էիք ձեր յօդուածը. եթէ ձեր գրուածը հրատարակուէր, կարելի է գովեստներու թիւը աւելի պիտի բազմանար և ահա պիտի յառաջ գար մի անվերջ բանակռիւ և դարձեալ ճշմարտութիւնը պիտի մնար առանց աղդեցութեան։ Մինթէ ամէն օր չէք տեսներ դուք այս ընթացքը մեր ազգային գրաւոր առպարիզին մէջ. մին՝ կը ջատագովէ, միւսն կը պարսաւէ, և փոխանակ ճշմարտութիւնն պարզուելու կը կը տեսնես որ անձնական հայհոյանքներ եւ կրից անբարի հեռեւանքներ միայն կը մնան գրական հրապարակի վերայ։ Եթէ մեր ժողովուրդը քննութեան օգտին վարժած լինէր. եթէ մեր պարբերական թերթերէն ոմանք ճշմարտութիւնը չը զոհէին ստութիւնի, եթէ մեր գրագէտներէն ոմանք անբարոյականութեան պաշտպան չիանդնէին, հաւատացէք որ մինչեւ ցարդ քննութեան բոլոր մէջ շատ և շատ իրողութիւններ զտուած էին. և ազգն եւս իւր բարեկամն ու թշնամին, իւր օգուտն ու վնասն բաւականին ճանաչած։ Թէ քանի քանի իրողութիւններ և պաշտօնական անձանց արարքներ գրաւոր հրապարակը եկած են և տարիներով գրութեան նիւթ զած. այս դուք լաւ գիտէք. բայց գրեթէ վերջնական վճիռ ամենեւին չեն ընդունած։ Ամենայն ինչ անորոշ, ամենայն ինչ խառնաշփոթ. քու նը-կարագրած սատանան ուրիշի առջեւ հրեշտակ. քու տեսած հրեշտակն ուրիշի առջեւ սատանայ. մի կողմէն պարսաւ միւս կողմէն գովեստ։ Եթէ բան չունիս խօսէ և գրէ. դարձեալ յայն Բաբէլաոյ յանապատի։ Մի կարծէք թէ այս ասելով յուսահատութեան և թմրութեան քարոզ կը կարդաք. ոչ երբէք, այլ կամիմք մեր ազգային իրողութեանց արդի վիճակն պատկերացնել։ Արդէն այն անձինքն, որոց կեանքն ու արարքը նկարագրած էր դուք, շատ անգամ գրութեան նիւթ եղած են. առ ժամանակ մի պաշտօնեայ հեռացած են և դարձեալ պաշտօնեաներու մէջ մնած. մէկ գաւառի ժողովրդէն բողոքուած, միւս գաւառի մէջ ընդունուած։ Կատարեալ գրութիւն մ՝ է այս, որ կը խաղացուի, և ամենէն մեծ դերասանն է տգիտութիւնն։ Քանի որ տգիտութիւնը կ՝իշխէ, դեռ շատ չարիքներ և աղէտներ պիտի հասնին մեր խեղճ ժողովրդեան գլխուն։ Ուս-

տի մեր ազգին արմատական և հիմնական բարիք մ՚ ընելու համար, ամենքս պիտի ջանանք տգիտութեան իշխանութիւնը կործանել. մտքերը ճշմարտութեան պատրաստել սրտերը բարոյականութեան վարժեցնել։ Եւ այս ուրիշ բանով չը լինիր, եթէ ոչ մեր խորին ուշադրութիւնը մեր ազգային կրթութեան և դաստիարակութեան վրայ դարձնելով։ Հետեւապէս աւելի ուրախալի էր դաստիարակութեան վերաբերեալ յօդուածներ ընդունիլ ձեզմէն եւ հրատարակել, քան թէ այն տխուր նկարագիրը, որով նկարագրած էիք մի քանի անձանց արարքներն։

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ

Քաղաքիս նորընտիր Կառավարիչն Վսեմափայլ Էլի Պէյ ամսոյս 17 ին քաղաքս ժամանեց, որուամ դիմաւորուած էին երեք Պատրիարքութեանց և բոլոր Իւպատոսարանաց Թարգմաններն եւ սահմանիներով հանդերձ։ Օդն գեղեցիկ էր և քաղաքիս բնակչաց գրեթէ մեծ մասն ճանապարհս վերայ կրսպասէին նորեկ Կառավարչի հանդիսաւոր մուտքն տեսնելու։ Իսկ 19 ին՝ ի ներկայութեան բոլոր պաշտօնակալաց, Թարգմանաց եւ բազմախուռն հանդիսականաց Վսեմ. Կառավարչի հաստատութեան Կայսերական Իրովարտակն կարդացուեցաւ և այնուհետեւ պաշտօնական այցելութիւնքն սկսան։

— Ընդհանուր դիտական Եպիսկոպոս մի, ճանապարհորդելով՝ ի Պաղեստին եւ փափաքելով Երեւելեան Վրիստոնէից նկատմամբ տեղեկութիւններ քաղել, այցելութեան եկաւ մեր Ս. Պատրիարքին և սոյն այցելութեան ժամանակ, որ քանի մի ժամ տեւեց, երկարօրէն խօսակցեցաւ Ս. Պատրիարքի հետ, և մեր ազգայնութեան, Եկեղեցւոյ և դաւանութեան մասին կարեւոր ծանօթութիւններ ստանալով մեծաւ գոհութեամբ մեկնեցաւ, ցաւ յայտնելով միայն որ ցարդ խիստ թերի գաղափար ունեցած են մեր Ազգի և Եկեղեցւոյ նկատմամբ։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ՆՈՐ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ

Յովհաննէս Ա. Ա. Սուրէն.

Այն նոր հրատարակութիւնն, յորմէ մի օրինակ նուէր ղրկած է Մեծ. Հեղինակն՝ Ս. Աթոռոյս Թանգարանին, դիւրաւոյց եղանակաւ յօրինուած է նորակարգիս համար։

Կան արդէն քանի մի ԳՈՐԾՆԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ և ահա Մեծ. Սուրէն եւս ներկայ Քերականութիւնն կը մատուցանէ Ազգային դպրոցաց. մայրենի լեզուի ուսումն դիւրացնելու համար։

digitised by A.R.A.R.@

Ուրախ եմք մեք, որ մեր մայրենի լեզուի ուսումն օր աւուր կարեւորութիւն կը ստանայ և նորանոր դասագրքեր կը պատրաստուին և սոյն ուրախութեամբ կը շնորհաւորեմք Պ. Սուրէնի նոր աշխատասիրութիւնն։

ՓՆՆԱԿԱՆ ԿՐՕՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Տ. Սահակ Քահանայի Տ. Սարգիսեան։

Արժանապատիւ Հեղինակն մի օրինակ նուէր ղրկած է Ս. Աթոռոյս Թանգարանին սոյն նոր երկասիրութիւնն, որ բաւականին ընդարձակ է և կը պարունակէ կարեւոր տեղեկութիւններ Կրօնագիտական ուսման նկատմամբ։

Մեր Քահանայական դասուն մէջ մխիթարական երեւոյթ մ'է Արժ. Սահակ Քահանայի ԿՐՕՆԱԳԻՏՈՒԹԻՒՆն, յորում յայտնապէս կը տեսնուի, որ իւր կոչման համեմատ, ուսումնասիրած է Ս. Գիրքն, Ս. Հարց գրուածներն և Քրիստոնէական կրօնի արտաքին եւ ազգային ջատագովութիւններն։ Կրօնական ուսմունքներն, յորմէ անտի Քրիստոնէութեան Ազգի մերոյ, միակ միջոց եղած են մեր ազգային բարոյական զարգացման և մխիթարութեան 'ի հալածանս եւ 'ի վիշտս։ Հետեւապէս ներկայ անտարբերութեան ժամանակիս մէջ ով որ նոյն կրօնական եռանդն բանիւ եւ գրով արծարծել կը ջանայ՝ մեծ գործ կը գործէ։

1. ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱՅԲԲԵՆԱՐԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒ ԱՇԱԿԵՐՏԱՑ ՀԱՄԱՐ։

2. ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԴՊՐԱՏԱՆՑ ՏՂՈՑ ՀԱՄԱՐ։

3. ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՆԻ ՔԱՂԱՔԻՆ, ՀԱՆԴԵՐՁ ՏԵՍԱՐԱՆԱՅՈՑՑ ՊԱՏԿԵՐՕՔ։

4. ՆԵՐՍԷՍ Ե. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ։

5. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԻՐԻՄՈՒ։

6. ԺԼԱՏ, ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ։

Վերոգրեալ գրքերէն երկու երկու օրինակ նուէր ղրկած է Ս. Աթոռոյս Թանգարանին Մեծ. Հեղինակն Պ. Յովհաննէս Տ. Աբրահամեան որ Ռոստով քաղաքի մէջ յատուկ Տպարան, Վիմագրատուն եւ Գրատուն ունի, թէ կը շարագրէ և թէ կը տպագրէ։ Հրապարակաւ կը մատուցանեմք մեր շնորհակալութիւնն սոյն գործունի Հայուն, ոչ միայն իւր նուէրներու մասին, այլ և իւր գովանի ջանասիրութեան։

ՑԱՆԿ ՆԻՒԹՈՑ

ՑՈՒՆՎԱՐ

ՆՈՐ ՏԱՐԻ. 1
Ս. Աթոռոյս ընդհանուր ժողովոյ 1874ի առաջին բացումն. 7
Ի՞նչ պիտի լինէր ընկերութեան վիճակը, եթէ Քրիստոնէութիւնը չերեւէր բնաւ աշխարհի վերայ. 9. 36. 54. 77

digitised by A.R.A.R.@

Հոմուական Աստուածաբանութիւն 12
Արժանաւորութիւն և գերազանցութիւն Եկեղեցական պաշտօնէութեան . 14
Առողջական . 16. 39. 58. 79. 110 126. 154. 182
Նոր տարւոյ առթիւ խօսուած ճառեր . 18
Նամակ . 22
Ժամանակագրականք . 24. 48. 71 120. 143. 168. 190. 216. 262. 285

ՓԵՏՐՎԱՐ

Ճշմարիտ յառաջադիմութիւնը ո՞ւր է . 25
Հանդէս տարեդարձի նահատակութեան Ս. Վարդանանց և ծառանգաւորաց վարժարանի և ճառ . 32
Ոգի փառասիրութեան եւ ձրգտումն գահերեցութեան իբրեւ առաջին տիրապետ լուսաւորեալ դարուս այսմիկ . 42
Է. Տիեզերական ժողով . 47

ՄԱՐՏ

Ուսումն Քրիստոնէութեան . 49
Դպրոցական հանդէսք . 63
Բանք ապաշաւանաց . 70. 87

ԱՊՐԻԼ

Ամեն յանցանք իւր հատուցումն ունի . 73
Բեթղեհեմի Ս. Ծննդեան խնդիր . 83. 103
Առ Զամուռճեան . 90. 131
Սոսխաստութիւն . 94

ՄԱՅԻՍ

Տեղեկագիր Հոմուական այցելութեան Մելքիսեդեկ վարդապետի Մուրատեանց . 97
Հայաստանեայց Եկեղեցւոյ յարատեւութեան և պահպանութեան միջոցներն . 106
Ներկայիս վրայ խորհրդածութիւնք . 114. 121. 145
ԱՍՏՈՒԱԾ.—Նախկին փիլիսոփայութեան քաղուածոյք . 117. 137

ՅՈՒՆԻՍ

Գոլութիւն 'ի վերայ Հերիսայի . 132
Լոյս, հանդէս կիսամեայ . 135
Գիսաւոր . 142
Նոր հրատարակութիւն . 144. 192 264. 285

ՅՈՒԼԻՍ

Փառք 'ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն 'ի մարդիկ հաճութիւն . 149
Հարցաքննութիւնք եւ հանդէս Պարգեւաբաշխութեան ծառանգաւորաց վարժարանի . 159
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ — Թուագիտութեան կարեւորութիւնը . 162
Միացումն սիրոյ մարդկութեան ընդ սիրոյն հայրենեաց . 165
Ցաւալի, բայց բարեյաջող դէպք մի 'ի Զանագ—Գալէ . 167

ՕԳՈՍՏՈՍ

Կարեւոր է ուսանիլ զմարդն, կարեւոր է մարդոյ ուսումն նկատել իբրեւ հիմն բանաւորական դաստիարակութեան . 169

digitised by A.R.A.R.@

Յաւիտենական կամ բնութեան օրէնք . 187
Համառօտ տեղեկութիւն Իտալիոյ Լիվորնօ քաղաքի գաղթական Հայոց վրայ . 188
Նուիրատուութիւն . 191

ՍԵՊՏԵՄԲԵՐ

Ուսումն մարդոյ . — Մասն առաջին . — Յաղագս առողջ մարմարդոյ . — Տարերք, պարզ մարմինք . (Շարունակելի) . 193
Խնդիր Կաթողիկոսութեան Ասորւոյ . 198
Ցանգիմանութի խաբէութեանց Զամուռճեանի . 201
Գիտէք զի՞նչ արարի . 207
Կրթարան Աւետարանական բանից . — Դաս Դ . — Ամեն Անուշահոտութեան . 208. 217
Քէփուր կամ Տօն Քաւութեան Հրէից . 215
Երկաթուղի Յոպպէէն յԵրուսաղէմ . 216

ՀՈԿՏԵՄԲԵՐ

Ժողովրդական երգիչներ . 223
Սիրտ մարդոյ . 225
Գրիչ . 226
Պարսից Շահին գոհարները . 228
Զգուշութիւն դատելու ժամանակ . 229
Մարգարէական յարակցութիւն ընդ մէջ Հին և Նոր Կտակարանաց . — Յառաջաբան . — Հարց և պատասխանի . 234. 241. 265
Ամենապատիւ Պատրիարք Ասորոց յԱնգղիայ . 239
Եղեռնագործութիւն . 240

ՆՈՅԵՄԲԵՐ

Հաւատք և Յոյս . 246
Բանասիրական . 248. 278
Նամակ . 255
Երգ Հայաստանի շինական խընձոյից . 257
Առ Խմբագրութիւն Սիոնի . 261
Պատասխան . 262. 284

ԴԵԿՏԵՄԲԵՐ

Մարդկային աղքին կրօնքը . 273
Ի ծնունդն Քրիստոսի . 283
Ցանկ նիւթոց . 286

digitised by A.R.A.R.@